ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

ք.Երևան, Թբիլիսյան խճուղի 3/9
հեռախոս՝ 201-079

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպություն

/հասցեն՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59/

"10" մայիսի, 2012թ.

ԴԴ 8.1 -3054/12

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 117.17-րդ հոդվածի համաձայն Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանի 10.05.2012թ. որոշումը:

Առդիր՝ դատարանի որոշումը 6 (վեց) թերթից:

ԴԱՏԱՎՈՐԻ ՕԳՆԱԿԱՆ ՍԱՎԴԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի վճիռ
Նախագահող դատավոր՝ Ռ. Հակոբյան

Վարչական գործ թիվ ՎԴ/0176/05/11

10 մայիսի 2012թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանը
(այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) հետևյալ կազմով՝
նախագահող դատավոր Աշոտ Սարգսյան,
դատավոր Հովսեփ Բեդևյան,
դատավոր Արա Բաբայան,

մասնակցությամբ՝ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Ա. Զալյանի,

դռնբաց դատական նիստում, քննելով ըստ հայցի «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ընդդեմ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության՝ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության տեղեկատվության ազատության իրավունքի խախտման փաստը ճանաչելու և 09.12.2010 թվականի թիվ Ե/2010-246 հարցումով փնտրվող տեղեկությունը տրամադրելուն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը պարտավորեցնելու պահանջների մասին, թիվ ՎԴ/0176/05/11 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 23-ի վճռի դեմ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության կողմից բերված վերաքննիչ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը (այսուհետ նաև՝ Կազմակերպություն) հայցադիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ընդդեմ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության (այսուհետ նաև՝ Նախարարություն)՝ Կազմակերպության տեղեկատվության ազատության իրավունքի խախտման փաստը ճանաչելու և 09.12.2010 թվականի թիվ Ե/2010-246 հարցումով փնտրվող տեղեկությունը տրամադրելուն Նախարարությանը պարտավորեցնելու պահանջների մասին:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան) 2011 թվականի նոյեմբերի 23-ի վճռով հայցը մերժել է:

Նշված վճռի դեմ Կազմակերպությունը բերել է վերաքննիչ բողոք:

Վերաքննիչ դատարանի (նախագահող դատավոր՝ Աշոտ Սարգսյան, դատավորներ՝ Լարիսա Սոսյան, Արա Բաբայան) 2012 թվականի հունվարի 30-ի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատական կազմում ընդգրկված դատավոր Լարիսա Սոսյանի լիազորությունները պաշտոնավարման տարիքը լրանալու կապակցությամբ 2012 թվականի ապրիլի 7-ին հաջորդող օրվանից Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով դադարել են:

Վերաքննիչ դատարանի նախագահի 2012 թվականի ապրիլի 10-ի մակագրությամբ թիվ ՎԴ/0176/05/11 վարչական գործը հանձնվել է Վերաքննիչ դատարանին հետևյալ կազմով՝ նախագահող դատավոր՝ Աշոտ Սարգսյան, դատավորներ՝ Հովսեփ Բեղնյան, Արա Բաբայան:

Վերաքննիչ դատարանի (նախագահող դատավոր՝ Աշոտ Սարգսյան, դատավորներ՝ Հովսեփ Բեղնյան, Արա Բաբայան) 2012 թվականի ապրիլի 10-ի որոշմամբ թիվ ՎԴ/0176/05/11 վարչական գործն ընդունվել է վարույթ:

Վերաքննիչ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վերաքննիչ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վերաքննիչ բողոքը քննվում է հետևյալ պահանջի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Սույն գործով Կազմակերպության տեղեկատվության ազատության իրավունքի խախտման հարցը պարզելու համար Դատարանը պետք է հերթականությամբ պատասխաններ հետևյալ հարցերին.

1) տեղի ունեցել է արդյոք միջամտություն Կազմակերպության տեղեկատվության ազատության իրավունքին,

2) եթե միջամտություն եղել է, ապա այդ միջամտությունը եղել է արդյոք օրենքի հիման վրա,

3) եթե միջամտությունը եղել է օրենքի հիման վրա, ապա դա եղել է արդյոք անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում:

Դատարանը խնդրի լուծման այս ձևաչափը չի պահպանել, սակայն լռելյայն ընդունել է, որ տեղի ունեցել է միջամտություն Կազմակերպության տեղեկատվության ազատության իրավունքին, քանի որ միանգամից անցել է «օրենքի հիման վրա» միջամտության հարցի ուսումնասիրությանը, իսկ դա հնարավոր է միայն առաջին նախապայմանի առկայության դեպքում:

Պատասխանողը որևէ կերպ չի վիճարկել այն փաստը, որ Կազմակերպության կողմից փնտրվողը «տեղեկատվություն» է՝ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի իմաստով, և այն հանգամանքը, որ տվյալ տեղեկատվությունն իր կողմից տնօրինվում է, թե՝ ոչ: Դատավարության մասնակցի կողմից փաստը չվիճարկելու երևույթը (հանգամանքը) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածով նախատեսված նախապայման է՝ այդ հոդվածով սահմանված իրավական հետևանքը վրա հասնելու համար:

Պատասխանողը չի վիճարկել նաև՝ ընդունել է, որ հայցվող տեղեկատվությունը չտրամադրելը միջամտություն է Կազմակերպության տեղեկատվություն ազատության իրավունքին:

Ուստի տվյալ դեպքում տեղի է ունեցել միջամտություն Կազմակերպության տեղեկատվության ազատության իրավունքին, որը երաշխավորված է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով:

Դատարանի այն ենթադրությունը, որ պատասխանող կողմը չի տիրապետում տվյալ տեղեկատվությանը, վճռով չի հիմնավորվում, քանի որ պատասխանողը փնտրվող տեղեկատվության տնօրինողն է, իսկ տեղեկատվության տնօրինողը պարտավոր է տրամադրել պահանջվող տեղեկատվությունը, որը պատասխանողի կողմից անհիմն կարգով մերժվել է:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 19.1-րդ գլխի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ բաժնի պահանջներով՝ խնդրել է բեկանել Դատարանի թիվ ՎԴ/0176/05/11 վարչական գործով 23.11.2011 թվականի վճիռը և այն փոփոխել՝ բավարարել Կազմակերպության հայցադիմումը:

3. Վերաքննիչ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Կազմակերպությունը 09.12.2010 թվականին Նախարարություն ներկայացրած դիմումով խնդրել է տրամադրել Նախարարությանը «Մարտիկ» հիմնադրամի կողմից ներկայացված մամուլի միջոցներով հրապարակված հաշվետվությունների օրինակները:

2) Ի պատասխան նշված դիմումի՝ Նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պետը 16.12.2010 թվականի թիվ 5056-10 գրությամբ հայտնել է Կազմակերպության նախագահին, որ «Մարտիկ» հիմնադրամի կողմից ներկայացված մամուլի միջոցներով հրապարակված հաշվետվությունների օրինակները չեն կարող տրամադրվել՝ որպես հիմնավորում վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասը, ինչպես նաև այն, որ տրամադրվել կարող են միայն «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված պետական գրանցամատյանում գրառվող տեղեկությունները, հայտնելով նաև, որ պետական միասնական գրանցամատյանի ամբողջական տեղեկությունները և իրավաբանական անձանց կանոնադրությունների պատճենները տրամադրվում են պետական տուրքի վճարումը կատարելուց հետո:

4. Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն ու եզրահանգումները.

Քննելով վերաքննիչ բողոքը նշված պահանջի սահմաններում՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ այն ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

տեղեկատվության ազատություն՝ տեղեկությունն օրենսդրությամբ սահմանված կարգով փնտրելու և դա տեղեկատվություն տնօրինողից ստանալու իրավունքի իրականացում.

...

տեղեկատվություն տնօրինող՝ տեղեկություններ ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական հիմնարկներ, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններ, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպություններ և դրանց պաշտոնատար անձինք.

...

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ գրավոր հարցման պատասխանը տրվում է հետևյալ ժամկետներում.

1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.

2) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի և ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.

3) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Վերոգրյալ նորմերից հետևում է, որ տեղեկատվության ազատությունը տեղեկությունը փնտրելու և տեղեկատվություն տնօրինողից ստանալու իրավունքի իրականացումն է, իսկ տեղեկատվություն տնօրինողներն այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները, պետական հիմնարկները, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունները, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունները և դրանց պաշտոնատար անձինք են, որոնք ունեն տեղեկություններ: Միաժամանակ տեղեկությունը տրամադրելու համար սահմանված են հստակ ժամկետներ, այն է՝ գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չլինելու դեպքում դրա պատճենը դիմողին է տրվում հարցումը ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված լինելու դեպքում տվյալ հրապարակման միջոցի, վայրի և ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում նույնպես հարցումը ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, իսկ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումը ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կազմակերպությունը Նախարարությանն ուղղված 09.12.2010 թվականի դիմումով խնդրել է իրեն տրամադրել «Մարտիկ» հիմնադրամի կողմից Նախարարությանը ներկայացված մամուլի միջոցներով հրապարակված հաշվետվությունների օրինակները, իսկ նշված դիմումին ի պատասխան՝ Նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պետը 16.12.2010 թվականի թիվ 5056-10 գրությամբ Կազմակերպությանը հայտնել է, որ «Մարտիկ» հիմնադրամի կողմից ներկայացված մամուլի միջոցներով հրապարակված հաշվետվությունների օրինակները չեն կարող տրամադրվել՝ որպես հիմնավորում վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասը, ինչպես նաև այն, որ տրամադրվել կարող են միայն «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված պետական գրանցամատյանում գրառվող տեղեկությունները՝ հայտնելով նաև, որ պետական միասնական գրանցամատյանի ամբողջական տեղեկությունները և իրավաբանական անձանց կանոնադրությունների պատճենները տրամադրվում են պետական տուրքի վճարումը կատարելուց հետո:

Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն գործում առկա նշված ապացույցներով միանշանակ հաստատվում է այն փաստական հանգամանքը, որ Նախարարության կողմից ամբողջությամբ պահպանվել են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված գրավոր հարցմանը պատասխան տալու ժամկետները:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանն ամբողջությամբ հիմնավոր է համարում Դատարանի եզրահանգումն այն մասին, որ. «հայցվորի դիմումին պատասխանելու ժամկետների հետ կապված ՀՀ արդարադատության նախարարության կողմից «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության տեղեկատվության ազատության իրավունքի խախտման փաստ առկա չէ»:

Ինչ վերաբերում է 09.12.2010 թվականի թիվ Ե/2010-246 հարցումով փնտրվող տեղեկությունը տրամադրելուն Նախարարությանը պարտավորեցնելու պահանջին, ապա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ այն նույնպես անհիմն է:

Այսպես, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հիմնադրամները սույն օրենքի 39-րդ հոդվածով սահմանված հաշվետվությունը հրապարակելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, այդ մասին գրավոր ծանուցում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ գրությանը կից ներկայացնելով հաշվետվությունը հրապարակած մամուլի միջոցի օրինակը:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն գործով ձեռք չեն բերվել այնպիսի բավարար ապացույցներ, որոնցով կարող էր հիմնավորվել այն փաստական հանգամանքը, որ «Մարտիկ» հիմնադրամը «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով սահմանված հաշվետվությունը հրապարակելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, այդ մասին գրավոր ծանուցել է Նախարարությանը՝ գրությանը կից ներկայացնելով հաշվետվությունը հրապարակած մամուլի միջոցի օրինակը: Մինչդեռ միայն վերոգրյալ հանգամանքի հաստատման դեպքում Նախարարությունը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի հիման վրա կարող էր համարվել որպես Կազմակերպության 09.12.2010 թվականի թիվ Ե/2010-246 հարցմամբ փնտրվող տեղեկատվությունը տնօրինող, հետևաբար նաև միայն այդ դեպքում Նախարարության վրա կարող էր դրվել Կազմակերպության կողմից փնտրվող տեղեկությունը տրամադրելու պարտավորությունը:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանն ամբողջությամբ հիմնավոր է համարում Դատարանի եզրահանգումն այն մասին, որ. «Անհերքելի է, որ «Մարտիկ» հիմնադրամը պարտավոր էր կատարել «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը: Դատարանի գնահատմամբ նշված պարտավորության օրենքով ամրագրված լինելու հանգամանքն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ այն կատարած լինելու փաստը հաստատված համարելու համար, քանի որ տեսականորեն բացառված չէ, որ այդ պարտականությունը Հիմնադրամի կողմից կատարված չլինի: Որոշակի գործողություն կատարելուն, այդ թվում նաև՝ տեղեկատվություն տրամադրելուն վարչական մարմնին պարտավորեցնելու համար դատաքննությամբ պետք է ձեռք բերվեն բավարար և անհերքելի ապացույցներ այն մասին, որ տվյալ վարչական մարմինը հանդիսանում է տեղեկատվություն տնօրինողը: Մինչդեռ այդպիսի ապացույցներ Դատարանին չեն ներկայացվել, ինչը հիմք է 09.12.2010թ. Ե/2010-246 հարցումով փնտրվող տեղեկությունը

տրամադրելուն ՀՀ արդարադատության նախարարությանը պարտավորեցնելու մասին հայցվորի պահանջը մերժելու համար»:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը եզրակացնում է, որ վերաքննիչ բողոքն անհիմն է և այն չի կարող հիմք հանդիսանալ Դատարանի վճիռը բեկանելու համար:

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին և հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասը՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքը մերժվելու պայմաններում այդ հարցը պետք է համարել լուծված:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածով, 117.13-րդ հոդվածով, 117.14-րդ հոդվածով, 117.16-րդ հոդվածի 1-ին մասով, 118.3-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վերաքննիչ բողոքը մերժել՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 23-ի վճիռը թողնելով անփոփոխ:

2. Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով՝ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ	ԴԱՏԱՎՈՐ	ԴԱՏԱՎՈՐ
Ա. ՍԱՐԳՍՅԱՆ	Հ. ԲԵԴԵՎՅԱՆ	Ա. ԲԱԲԱՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետում սույն որոշումը « » 2012 թվականի դրությամբ չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ